



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7864

4664a  
Հ Ա Ն Դ Է Ս

ՏՕՆԱԽՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ Տ Գ Է Ո Ր Գ Ի Ա Յ Դ

ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԲԱՅՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՎԱԿԱՐՁԱԳԱՏ

ԻՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԻԶ — 1876



**ՀԱՆԴԻՍ**

**ՏՕՆԵՐՄԲՈՐԹԵԱՆ ԱԿՈՒՆՆ**

**ՎԵՀԱՓԱՌ ՀՆՅՐԱԳԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տ Տ ԳԷՈՐԳԱՅ Դ**

**ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ**

**Բ Ա Ց Մ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի**

**ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾԻԻ**

**ՀՐԱՄԱՆԱԻ**

**Տ, Տ, ԳԷՈՐԳԱՅ Դ,**

**ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.**

Ի 25-ն Սեպտեմբեր ամսոյս (1876)  
յաւուր տօնի սրբոյն Գէորգայ Զօրալա-  
րի՝ Վեհափառ եւ Սրբազնագոյն Հայրա-  
պետի ամենայն Հայոց Տ, Տ, Գէորգայ  
Դ, Կաթողիկոսի Անուան Տօնախմբու-  
թիւնը եւ Մայր Աթոռոյս ճեմարանի  
բացման երկրորդ Տարեդարձը արժանա-  
ւոր եւ մեծաշուք հանդիսիւ կատարեցաւ:



Յայտնի է որ ձեմարանի սկզբնական օրհնութեան եւ բացման հանդէսը առաջին անգամ կատարուած էր 1874-ին Սեպտեմբերի 28-ին. այնուհետեւ մինչեւ յաջորդ տարին, այս ինքն մինչեւ ձեմարանին հրդեհեալ մասին նորոգման աւարտելը, աշակերտք սուրբ Եջմիածնայ Ղազարապատ անուանեալ մասին մէջ սլատսպարուած լինելով՝ առաջ տարին ըստ կարի իւրեանց ուսումն ու կրթութիւնը՝ մէկ նախակրթարան եւ երկու դասարան բաժանուած: Իսկ անցեալ 1875-ին Յունիսի 10-ին փոխադրուելով ի վերանորոգեալ շինուած ձեմարանին, աշակերտք երեք դասարան բաժանուեցան՝ առանց նախակրթարանի, եւ այնուհետեւ աւելի կանոնաւոր կերպիւ սկսաւ ձեմարանին ուսումնական ընթացքը՝ այնպիսի կարգադրու-

թեամբը՝ որ իւրաքանչիւր տարի մէկ մէկ նոր դասարան բացուելով՝ վեց տարուան մէջ՝ վեցերորդ դասարանի աշակերտները կարողանան աւարտել Գլրանոցական ուսմունքը, եւ այնուհետեւ սկզբնաւորութիւն լինի ձեմարանական բարձրագոյն դասախօսութեանց:

Անցաւ մէկ տարի եւս, եւ ահա (ներկայ 1876ի) Սեպտ. 25-ին երկրորդ տարեդարձը կատարեցաւ, բայց կարելի է համարել այս անցեալ տարին զօրութեամբ առաջին տարի ուսմանց ձեմարանին, որովհետեւ այժմ կարելի եղաւ գրեթէ աւելի բացայայտ կերպով իմանալ՝ որ հաստատուն յոյսեր կան ձեմարանին անխափան յառաջանալուն եւ իւր գեղեցիկ նպատակին հասանելուն ի դէպ ժամանակի՝ եթէ անակնկալելի իմն կերպիւ արտաքին հզօր արգելքներ չծագին:

Տարեկան հարցաքննութիւնները եղած էին մասամբ Յունիս ամօոյն սկիզբները, եւ մասամբ Յգոստոսի վերջերում: միշտ ի ներկայութեան Վերատեսչին եւ վարժապետաց, ըստ այնմ՝ եղաւ դատարանաց փոփոխութիւնը եւ բացուեցաւ չորրորդ դասարան: Իսկ կանոնաւոր դասառութեանց սկզբնաւորութիւնը եղաւ Սեպտեմբերի 1-ին՝ երբ եկան հասան բարձրագոյն դասարանաց համար հրաւիրեալ նոր վարժապետները:

Չորրորդ դասարանին բացուելովը կարելի եղած էր այս տարի առաջին դասարանին մէջ մնացող աշակերտաց թիւը լրացնել՝ ընդունելով 20-ի չափ նորեկ աշակերտներ՝ Տեսչութեան հրատարակած պայմաններուն համեմատաւ սով բոլոր աշակերտաց թիւը, որ հերոս 70-էն աւելի չէր, եղաւ 95, եւ թէ-

պէտ հարիւրաւոր խնդրատուք եւս ցանկացան ի ձեմարանն մոնէլու, բայց կարելի չեղաւ առ այժմ՝ ընդունել շինուածոյն համեմատաբար անձուկ լիներուն՝ պատճառաւ:

Արդ սրբոյն Գէորգայ Զօրավարի տօնին օրը\*) զկնի առաւօտեան ժամերգութեան՝ բոլոր Միաբանք եւ ձեմարանական աշակերտք, Սինոդական եւ քաղաքական պաշտօնատեարք եւ ուրիշ բազմաթիւ պատուաւոր անձինք՝ ինչպէս նաեւ Վաղարշապատայ օրիորդաց եւ արականաց դպրոցաց աշակերտք եւ այլն, յետ կատարման վաղեմի սովորա-

---

(\*) Նաև նախընթաց աւուր յերեկոյեան ժամերգութեան՝ ի պատիւ Վեհ. Հայրապետի մերոյ՝ և ի փառս սրբոյն Գէորգայ՝ արժանաւոր շքով և հանդիսիւ՝ նախատօնակ կատարեցաւ:



կան Մաղթանաց վասն Հայրապետի ամենայն Հայոց՝ ներկայացան Վեհափառ Կաթողիկոսին օրհնութիւնը առնելու՝ Ս. Աջը համբուրելով եւ շնորհաւորելով (մեր Վեհ. Հայրապետի) անուանակոչութեան տօնը\*)։ Սուրբ Պատարագէն յետոյ (գոր մատոյց Գեր. Վերատեսուչն ձեմարանի Տ. Գաբրիէլ Սրբազան Արքեպիսկոպոս) բոլոր եկեղեցական դասքն զգեստաւորեալք ելան թափորապէս ի Տաճարէն սրբոյ Էջմիածնի՝ եւ սրբոյն Գէորգայ շարականը երգելով գնացին ի ձեմարան։ ձեմարանի մեծ դրան առջեւը կամարակապին ներքեւը

(\*) Այս առթիւ ձեմարանի օրիորդաց ծխ. դպրոցի աշակերտաց ի դիմաց մի մի ճառ կարգացուեցաւ, զորս արժան կհամարվիք ի ստորև հրատարակել։

պատրաստուած էր Վեհափառ Հայրապետի համար բարձրաւանդակ Գահը. Նորին Վեհափառութիւնը այն գահին առջեւը կանգնած էր՝ երբ թափօրը մըտաւ ձեմարանին ընդարձակ գաւիթը՝ երգելով Սրբոց Թարգմանչացն մերոց շարականը։ Յետ այնորիկ եկեղեցականը շուրջանակի պար առեալ կատարեցին պաշտօն հանգստեան վասն հոգւոց ծընողաց Վեհափառ Հայրապետի մերոց հիմնադրի ձեմարանին, - ինչպէս որ հաւանութեամբ Վեհապետի սօս համանած է կատարել այն պաշտօնը ամեն տարի նոյն օրը ի հանգիստ հոգւոց բարեկշռատակ ծնողացն իւրոց, եւ այլն։

Կանչուած էին օրուան հանդիսին վայելչութիւնը աւելցընելու համար նա եւ զինուորական նուագածուներ, որ այն միջոցին իրենց նուագարանները

զարկին՝ մինչեւ որ ժամարարը եւ միւս եկեղեցականք իւրեանց զգեստները հանեցին ներս, եւ եկան շարուեցան ըստ կարգի Վեհափառ Ս. Կաթողիկոսի երկու կողմը. այն ատեն ձեմարանին Վերատեսուչ Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոսը կարգաց իւր ձառը, զոր ամբողջ կրնեմք այս տեղ:

ձառին ընթերցմանէն վերջը աշակերտք զանազան երգեր երգեցին, եւ մէջ ընդ մէջ կարգացուեցան վարժապետաց եւ աշակերտաց յօրինած ոտանաւորները ի խորհուրդ օրուան հանգիսին, որոց հրատարակութիւնքը եւս արժան կհամարիմք:

Ի վերջ ամենայնի Վեհափառ Հայրապետ ոտք ելաւ եւ իմաստալից եւ սրբտաշարժ խօսքերով յայտնեց իւր հայրական սրտին ուրախութիւնը զոր կըզ-

գար՝ տեսնելով իւր բազմամեայ փափաքանաց (այս ինքն կանոնաւոր եւ ընդարձակ եկեղեցական Ուսումնարան կանգնելուն եւ յաջողելուն) կատարուելու մեծամեծ յոյսերը: Յուսադրական բանիւք կքաջալերէր ոչ միայն ձեմարանի կառավարիչները, այլեւ ժողովականքը եւ բովանդակ մեր Աղգը՝ որ քաջալերուին, սիրտ առնուն, եւ իրեն պէս չլհատելով ամենեւին յերեսաց պէս պէս դժուարութեանց՝ աշխատել որ այս ձեմարանը հասնի իւր վոեմ՝ աղգաշահ եւ կենցաղօգուտ նպատակին, եւ Հայրապետական օրհնութիւնը տալով արձակեց հանդիսականները: Իսկ նոքա ելան ձեմարանին ութանկիւնի մեծ հանդիսարանը, որոյ ձակաւը զարդարուած էր Վեհափառի մեծադիր իւզաներկ կենդանագրովը, եւ այն տեղ զննեցին



աշակերտաց բաղմամբ իւր գծագրութիւնները եւ նկարները: Եւս հայերէն եւ ռուսերէն վայելչագորութեան օրինակները:

Այս ազգային հանդէսը վերջաւորեցաւ յերեկոյին գեղեցիկ լուսավառութեամբ Վեհարանին: Վանքին եւ ձեմարանին: Եւ զանազան հրարուեստական խաղերով ու նուագարաններով մինչեւ ուշ ժամանակ:

Կմնայ մեզ մաղթել Վեհափառ Հայրապետի մերում՝ երկար կեանք եւ յաւելում՝ սյսպիսի ուրախութեանց եւ մրխիթարութեանց ի փառս Աստուծոյ եւ յօգուտ եւ ի պայծառութիւն Հայաստանեայցս առաքելական սուրբ Եկեղեցւոյ:

Ահաւասիկ՝ այս ազգային նշանաւոր հանդիսի նկարագրութիւնը ամփոփելէ զինի՝ կյաւելուէք հրատարակել՝ ձեմարանի

րանի Գեր. Վերատեսչին ընթերցած ձառը եւ զայլն հետզհետէ ի կարգին:

### ՎԵՀՎՓԱՌ ՏԵՐ

### ԱՍՏՈՒԾԱՐԵԸ ՀԱՅՐԱՊԵՏ

Զի՞նչ ինչ քաղցրագոյն կայցէ՝ յաշխարհի որոց միանգամ՝ յուսովն վաստակիցին՝ քան զտեսանել՝ թէ եւ բացուտ ի բաց՝ զարդեանց աշխատութեանցն իւրեանց զբարենշան զբաղմաբեղուն արգասիս: Զայսը քաղցրութեան եւ զբերկրառիթ ուրախութեան առեալ այսօր եւ մեր զճաշակ՝ ողորմութեամբ Բարձրելոյն՝ ի գործ տեսչութեան Գեորգեան ձեմարանիս Սրբոյ Եջմիածնի: Համարձակիմք աւասիկ լի հրճուանօք հրաւէր կարդալ ո՛չ միայն սրբագումար

Ուխտիս միաբանութեան Հարց եւ Եղբարց բարեսիրաց, այլ եւ համօրէն ամենայն որդւոց հարազատից Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ՝ հաղորդս մեզ հանդիսանալ ի խնդութեանս մերում: Եւ արդեօք կարի իսկ յիրաւունս:

Վեհափառ Տէր, տեսանէք աւատիկ շուրջ բոլորեալ երամովին զՁերովդ Աթոռով զայնոսիկ յորդեկացն Ձերոց՝ յորդւոց Հայաստանի, յորոց ի գլուխս հեղէքն առատապէս զհայրապետակաւնին Ձերոյ զօրհնութեան զցօղ զուարթարար անդստին ի սկզբանէ, եւ մանաւանդ յառաջնումն տարեգարձի բացման հոյակապ ձեմարանիս: Տեսէք արդ յերկրորդումն, տեսէք սրբան աճեցին եւ արդասաբերք եղեն ի հոլովել տարեկան շրջանիս՝ շնորհիւ անդուլ աղօթից եւ անթերի խնամոց Հայրապետիդ Մեծի եւ

անխոնջ վաստակովք աշխատաւորացն առ ի Ձէնջ կարգելոց եւ ցանգ ի յառաջադէմն նիրսել խրախուսելոց:

Ե ինչ ազաքէն ի տեսարանս այսպիսիս, Վեհափառ Տէր, որ ակներեւ առաջի կայ ամենեցուն, որպէս աճումն թուոյ սանուցդ որդեգրելոց Մայր Աթոռոյս, հանդերձ քաջառողջ կենդանութեամբ նոցին եւ զուարթածաղիկ գոհութեամբ սրտի, եւ է ինչ դարձեալ՝ որ յաւետ նշմարի հոգւոց՝ որոց ոչ կարծեօք ինչ եւ ոչ վեր ի վերոյ, այլ ճշդիւ գտակաւ հմտացեալ իցեն դաստիարակութեանն արուեստի: Արդ ներեսցէ ինձ Ձերդ Վեհափառութիւն զերկաքանչիւրդ ազգ յառաջադիմութեան երեւութացեալ ի Ձերում դաստակերտիս՝ սլարդել ըստ կարի աստանօր ի մեծահանդէս աւուրս տօնի առաջի յոգ:



Նախուռն ակմբխ, ոչ ի մնտի ինչ պարծանս խաբէութեան, եւ ոչ զմարդահաճոյից ոմանց բերել կամելով՝ զամօթապարտ կերպարանս, այլ իբր զհամարատուութիւն տնտեսի հաւատարմի՝ կոչեցելոյ ի Տեառնէդ իւրմէ յայս գործ տաժանական, բայց աստուածահաճոյ եւ անզգային:

Ապաքէն ոչ ըստ չափու մեծութեան շինուածոյ վայելչակերտ ձեմարանիս էր ի հերուն թիւ աշակերտաց սորին՝ ըստ պէսպէս պատճառաց որոց առաջինն եւ գլխաւոր այն իսկ էր՝ զի չէր մարթանդէն ի սկզբանն բացումն առնել բազում դասարանաց միանգամայն. որոյ վասն որք ի հերուն չէին ինչ աւելի քան զվաթսուն եւ վեց, այսօր եղեն իննսուն եւ հինգ աշակերտք. թող եւ զբազմութիւ պատանիս ցանկացողս այսր մտա-

1864

նել, ոչ ի չքաւորացն եւեթ դասուէ, այլ եւ ի խոստացողացն զՆաչակ հատուցանել տարեւորական, զոր իրաւամբ չներեն այժմու կանոնք ձեմարանիս: Եւ յետինս այս երեւոյթ՝ զարմանալի իմն թուեցեալ յաչս յոլովից՝ զի՞նչ իցէ, եթէ ոչ գործնական եւ սպառսպուռ փարատումն կասկածին երկիւղի այնոցիկ ի բարեմիտ մարդկանէն, որք համարէին՝ թէ ոչ որ ոչ ուրեք հաւան գտցի երբէք տալ զորդիս իւր յաշակերտութիւն ձեմարանիս, թէ եւ յՅիւսէպոս (բաբէ, բաբէ), թէ եւ ճրիաբար առնուլ զնոսին մտաբերիցէ որ: Այ, ոչ այդպէս իցէ, եղբարք պատուականք: Ահա այժմէն իսկ զաղաղակ հարկանեն առ Ձեզ, Վեհափառ Հայրապետ, ուսումնատենչիկ մանկունք Հայաստան ժողովրդոց՝ հազարաւորաց եւ բիւրաւորաց՝ փութալ ի կատարումն



գեղեցիկ խոստմանդ, ընդարձակագոյնս  
յօրինել զբնակութիւն ձեմարանիս.  
քանզի նեղ եւ անձուկ է մեզ — գոչեն  
ամենեքեան — դաստակերտդ գեղեցիկ:

Փարատեցան արդեօք ի տարեւոր ժամանակիս եւ միւս եւս կասկածն երկիւզի՝ թէ գուցէ ծանրութիւն օգոց եւ եղանակիս Վաղարշապատու վնասաբեր լինիցի առողջութեան մանկտւոյն, մանաւանդ ի տօթագին աւուրս ամարայնոյ: — Եւ զիտորդ ոչ քանզի ոչ միայն որ բնիկքն են Կովկասական գաւառացիս աշակերտք՝ ի քաջողջութեան վայելեն ահա՛ զերծք յամենայն երկարատեւ խօթութեանց եւ ի պէսպէս ցաւոց վնասակարաց՝ եւ այն՝ զկնի տապախառն եւ ջերմաջերմ՝ աւուրց անգամ ամարայնոյն անցելոյ, այլ եւ որ եկեալքն

են ի հեռաւոր աշխարհաց եւ ի հովասուն վայրաց աշակերտք, յԱթտէրխանէ ասեմ՝ եւ յԱսպահանէ, ի Կոստանդնուպօլսոյ եւ ի Ղարաբաղէ, ի Դավրիթէ եւ ի Շամախուոյ, յԱգուլեաց եւ ի Պեսարապիոյ, ի Կլիկիոյ եւ ի Նորոյն Նախիջեւանէ, ի Տրապիզոնէ եւ յԵղոկիոյ եւ որ այլքն եւս, միօրինակ ունին աւասիկ քաջողջութիւն եւ զուարթութիւն: Եւ այս եթէ ոչ այնչափ օգոցս բարեխառնութեան թուիցի ումեք շնորհ, որչափ մանաւանդ քաջարթուն խնամնց դաստիարակաց ի վերայ սանուցս մերոց արգասիք, սակայն չիք երկբայութիւն՝ զի զԴՐ եւ ունայն ամբաստանութիւնքն են որ զանհնարին վնասակարութենէն օգոյ Վաղարշապատու՝ մօրն եղելոյ երբեմն քաղաքաց Արարատեան նահանգիս:



Բայց հզօրագոյն քան զառարկուած-  
սըզ զայդոսիկ՝ ո՞չ ապաքէն այն էր ի  
հերուն ի միտս եւ ի բերանս իսկ բազ-  
մաց ի մերազնեայ եղբարց տազնապ տա-  
րակուսի՝ թէ ո՛ւստ ուստեք հայթհայ-  
թեսցին արդեօք ուսուցիչք եւ վար-  
ժեար՝ որք յօժարից ին կամ բնաւ իսկ  
մտաբերիցեն այսր եկաւորել՝ յաշխար-  
հըս խոսկանացեալ ըստ բազում գլխոց,  
յաշխարհ լոկ եւ թափուր ի յօլովից  
կենցաղական զբօսանաց եւ յօրինաւորն  
զուարճութեանց, եւ ի կարեւորագունից  
անգամ՝ կենսական պիտոյից եւ դիւ-  
րութեանց: Սակայն տեսաք աւասիկ,  
տեսանեն եւ ամենեքեան, զի ուրանօր  
ունիցի զտեղի ի միոյ կողմանէ հեռա-  
տեսն չափաւորութիւն եւ զգուշաւոր  
ընտրութիւն՝ համեմատ նախնական պի-  
տոյից այսպիսւոյ ուսումնարանի, եւ ի

միւսմէն՝ անձնանուէր եռանդն ճըշ-  
մարիտ աղգասիրութեան՝ անշէջ մնա-  
ցեալ տակաւին ի սիրտս ուսումնասէր  
եւ աշխատասէր երիտասարդաց բազ-  
մաց, անդ ոչ դժուարին ինչ է կանգնել  
զյաղթութիւն ի վերայ խափանարար  
խոչից այնպիսեաց: Եւ ահա տարեկան  
յառաջագիմութիւնք աշակերտաց ձե-  
մարանիս յերեսին դասարանս մեր՝ պեր-  
ճագոյնս քան զամենայն բան ապացու-  
ցական երաշխաւորեն ստուգութեան  
իրացդ: Բայց աղէ եւ զայն տեսցուք մի-  
անգամ, զի եկին հասին աւանիկ եւ  
յուսելոց անտի ի համալսարանս Եւրո-  
պայ՝ արք արգարեւ քաջահմուտք պի-  
տոյից հայկազն մանկուոյն եւ հայասեռ  
ժողովրդոց կողմանց կողմանց, եւ վի-  
տակք առնել զպարտուպատշաճն ընտ-  
րողութիւն ամենայնի որ ինչ առ եւ-

բոսպական ազինս գտանիցին ոճք եւ յե-  
զանակք դաստիարակութեան, եւ մե-  
րումն նպատակի զնոսին պատշաճեցու-  
ցանել: Այսպիսիք ոմանք են ահա Պա-  
րոնայքն Յարութիւն Քէշքէկեան՝ ուսու-  
ցիչ Գաղղիարէն եւ Նատին լեղուաց, Լեւոն  
Թիւսիկեան՝ ուսուցիչ Գրահաշուի եւ  
երկրաչափութեան, Վարդան Աբուլեան՝  
ուսուցիչ Ռուսացն դպրութեան եւ պատ-  
մութեան Ռուսաց եւ Աշխարհագրու-  
թեան Ռուսաստանի, եւ Յովհաննէս Գա-  
լստեան՝ ուսուցիչ Հայերէն դպրութեան  
եւ Թուարանութեան եւ Կարգապահ,  
չորեքին եւս ի նորումն առ մեզ ե-  
կաւորեալք, որոց վաղածանօթն վաս-  
տակք լծորդեալք ընդ անխոնջ աշխա-  
տութեան եղելոցն արդէն ի ճեմարա-  
նիս՝ — որք են Արժանապ. Կիւրեղ Վար-  
դապետ Սրապեան՝ ուսուցիչ Կրօնագի-

տութեան եւ Թուարանութեան, Պա-  
րոնայք Վասակ Պապաջանեան՝ ուսու-  
ցիչ Բնական Պատմութեան, Մկրտիչ Պա-  
լեան՝ ուսուցիչ Հայկաբանութեան եւ  
Պատմութեան Մատենագրութեան Հայ-  
ոց, Ներսէս Սիմէօնեան՝ ուսուցիչ  
Ընդհանուր Պատմութեան եւ Աշխար-  
հագրութեան եւ գաղղիական լեզուի,  
Միքայէլ Միքայէլեան՝ ուսուցիչ Ռու-  
սերէն լեզուի, Պօղոս Ճէպէճեան՝ ու-  
սուցիչ Ձայնագրութեան եւ Պատմու-  
թեան Հայոց՝ եւ Տնտես, Աւաքել Սա-  
գինեան՝ ուսուցիչ Գծագրութեան եւ  
Նկարչութեան, եւ Մարտիրոս Քէրէս-  
թէճեան՝ ուսուցիչ Վայելչագրութեան՝  
եւ Քարտուղար. — քաջ քաջ երաշխաւո-  
րեն մեզ, թէ եւ յառաջիկայսն եւս յա-  
ջողագոյն գտցէ ճեմարանս մեր զար-  
գացումն եւ բարգաւաճանս ցանկալիս:



Թող ուրեմն եւ այնքիկ յիմաստնոց՝  
որոց հնչիցեն իմն ականջքն փափկա-  
սունք ի լուր իբրու եթէ ահաւորագոյ  
անուանակոչութեան ձե՛հարանկ եւ նպա-  
տակի սորին, եւ գոգ ի զարմանս իմն  
կրթիցին կամաւորապէս, թո՛ղ անմո-  
ռաց եւ զայս ինչ ունիցին յուշի, զի  
ընթացք ուսմանցն յորս պարապեն  
արդ աշակերտք ի սմն, եւ յորս պարա-  
պեսցին գէթ այլ եւս ամս երիս փոխա-  
դրեալքն զարգիս ի չորրորդ դասարան,  
նախադասիք եւեթ են ձեմարանական  
դասախօսութեանց. ուստի գուցէ ոչ  
այնչափ որչափ կարծելին էր՝ կարօտա-  
նան արդեօք առաջնոց ոմանց ի քաջա-  
համբաւ վարժապետաց պսակաւորե-  
լոց ի համալսարանս Եւրոպայ:

Այլ եւ կամէի թէ գիտիցեն այժմէն  
այնպիսիքն զոր ինչ Զերդ Վեհափա-

ուութիւն վսեմախոհ եւ յառաջատես  
խնամարկութեամբ եղեալ է արդէն ի  
մտի, այն է զընտրելագոյնսն ըստ ամե-  
նայն գլխոց յուսումնաւարտ աշակեր-  
տաց վեցերորդի դասարանին առաքել  
ի դէպ ժամուն ի համալսարանս Եւրո-  
պայ ծախիւք ձեմարանիս, որպէս զի  
անդանօր զամս երկուս կամ՝ երիս կա-  
տարելագործեալք ի պէսպէս մակա-  
ցութիւնս եւ ի հմտութիւնս՝ դարձ  
այսրէն առնիցեն, եթէ հնար է՝ մէն  
մի Խորենացիք եւ Եղիշայք եւ Եգնիկք  
եւ Ղազարիկք, եւ վարժապետիցեն այ-  
նուհետեւ յազգայնումն ձեմարանի՝  
չափաւորապէս վարձու շատացեալք:

Մտուցեալ արդ յո՞ճ եւ յեղանակ  
հանրական ընթացից ձեմարանիս յան-  
ցելումս տարեկան շրջանի, արժան հա-  
մարիմ՝ նախ զնիւթականացն պիտոյից

մատակարարութենէ խօսել համառօտիւ:

Սնունդ եւ հանդերձք եւ ամենայն արտաքին պէտք աշակերտաց ձեմարանիս՝ մատակարարին սոցա Ձերովդ խոհական վերադիտողութեամբ եւ հայրական խնամարկութեամբ առատապէս, եւ միանգամայն ճշգրիտ պահպանութեամբ տնտեսականին խնայութեան կանոնաց, ի Վանքական անուանեալ կառավարութենէն, ազատս զմեզ կացուցանելով այսու ի դրամականացն հաշուատուութեանց հասիցն եւ ծախուց. որով ի միոյ կողմանէ չտեսանի ինչ թերութիւն եւ ոչ մի յանկարօտն պահպանութիւն սանուցդ, եւ ի միւսմէն ճշգրին ըստ կարի եւ ի բաց պարուրին ծախք աւելորդք, առանց զանց առնելոյ եւ զյաւելուածով շինութեանց

կարեւորաց առ նորակառոյց ձեմարանաւ, որպիսի են լուացարանն ընդարձակ եւ հիւանդանոցդ վայելչակերտ, Հաշուեմատեանք ծախուցն եղելոց յայսրմ՝ ամի ակներեւ ցուցանեն աւանիկ դբանիցս ստուգութիւն, եւ յուսադիր մեզ լինին՝ աներկբայապէս, զի ուրանօր զուգընթաց միմեանց գտանիցին անխարդախ հաւատարմութիւն եւ անշահասէրն տնտեսութիւն, անդ ոչ սակաւ խնայութիւն ի ծախս գործի, եւ յաւելուած ազգաշահօգտից:

Իսկ հասքն կամ մուտք ուսումնարանիս մեծի՝ հանդերձեալք են բազմիմաստ հանճարով Ձերոյ Վեհափառութեանդ՝ գլխաւորապէս ի շահուց անտի մեծագումար դրամագլխոյն պատրաստելոյ ի գնոց տպագրեալ գրեւոյ եւ ի նուիրաբերութեանց բարեպաշտ իշ-



խանաւորաց եւ ժողովրդոց, եւ յանուանէ՝ յառատաձեռն նուիրանաց մշտնջենական եւ ժամանակաւոր բարերարաց եւ սատարաց շեմարանիս, զորոց քաղցր է մեզ յիշատակ առնել զանուանց ազգասիրացն ճշմարտից յաւուրս հանգիսի: Քանզի բաց ի հանգուցելոցն ի Քրիստոս՝ ի բարեյիշատակ կարապետէ Արքեպիսկոպոսէ յԱռաջնորդէն կարնոյ եւ Տփլսեաց, ի Գէորգայ Մանուկեան կալկաթացւոյ, յԱկիւլիենայ Ալաճալեան նոր նախիջեւանեցւոյ, եւ ի կարապետէ Թիւրքիեան Գրիգորուպօլսեցւոյ, — որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, — արժանաւորք մերոցս շնորհակալեաց գտանին Սոփիա տիկին Զալչալածէ Տփլիսեցի, Յովհաննէս Ստեփանեան Յովնանեանց, քաղաքացիք նորոյն նախիջեւանի, Ղլարայ եւ

Մողտոքի, Սուլթան տիկին Մելիք Բէկլարեանց Տփլիսեցի, Սարգիս Արքեպիսկոպոս Զալչեանց, Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեան, Եսայի Իզմիրեանց Ղլարեցի, Բարեգործական ընկերութիւնք Հայոց նոր նախիջեւանի եւ Բագուայ \*), Մկրտիչ Սանասարեանց, եւ Յովհաննէս Մուրաս իշխան Մանուկ Պէյ, յորոց ոմանք դրամագլուխս հաստատունս նուիրեցին ի նպաստ շեմարանիս, ոմանք զտոկոսիսն միայն, եւ այլք եւս միանուագ օժանդակութեամբ հաղորդք եղեն այսմ աստուածահաճոյ բարերարութեան:

(\*) Կյուսասիփ՝ զի ն. նախիջեւանի Բարեգործական և Բագուայ Մարդասիրական ընկերութիւնք ևս կիութան արդիւնաւորել իւրեանց բարի մտադրութիւնք և իղձիրլ:

Բայց ես փութամ ճեպիմ զգաստիարակութենէ մանկաւոյն մերոյ ասել բան հակիրճ եւ համառօտ, ոչ ինչ խէթ կասկածանաց ի մտի ունելով՝ թէ յաջս ոմանց ի քննասիրացն եւ ի պարտաւարկիտաց զանձնասէր ծնգոտի եւ զսնտիապարծ մարդոյ տայցեմ զանձնէ զկարծիս. — բայց ասացից զիրաւունս:

Վեհափառ Հայրապետ, ըստ Ձերումիջ իսկ պաշտելի հրամանաց՝ հիմն եւ հաստատութիւն տաճարիդ իմաստութեան զերկիւղն Աստուծոյ եւ զողբի աստուածպաշտութեան գիտելով՝ հանդերձ ողջամիտ բարոյականութեամբ, զամենայն ջան եւ զփոյթ ի կիր արկեալ է մեր՝ զի կանոնքն բարեկարգութեան եւ համօրէն ամենայն առաքինութիւնք եկեղեցական եւ քաղաքական կենցաղավարութեան օր ըստ օրէ բարգաւաճեալ

ծաղկեսցին ի սմա: Եւ թէ որչափ ինչ կամ որպիսի գտեալ իցեմք յայսմ Տեառն շնորհիւ յաջողութիւն, եթէ ոչ տարապայման ինչ գրեսցի ինձ վստահութիւնս՝ համարձակիմ զուարթամիտ ոգւով տալ վկայութիւն, զի հիմնաւորն հոգեսիրութիւն՝ հեռի յամենայն կեղծաւորութենէ՝ լծորդեալ ընդանյեղի հաւատարմութեան առ Հայաստանեայցս սուրբ Եկեղեցի, եւ ընդանդրդուելի հարազատութեան առ Մայր Աթոռս մեր՝ հանդերձ երախտագէտ զգացմամբ առ արժանաժառանգ Հայրդ հասարակաց, առ բազմարդիւն Հիմնադիրդ ձեմարանիս, ոչ զազիազփուն ինչ կանգաղեալք են, այլ արմատըս ի խոր ձգեալ անդստին յառաջնմէ իսկ տարւոյ ի սիրտս մատաղերամ մանկըտւոյդ՝ աճումնաձիգ բողբոջս զուար-



Թարարս տեսանելեաց այժմէն իսկ ար-  
ձակեն: Հանրական իմն ասեմ ջանա-  
սիրութիւնն անխոնջ, որով ի կրկնակի  
հանդէսս հարցաքննութեան՝ ի սկիզբն  
Յունիսի եւ ի վերջին աւուրս Օգոստոսի  
տարւոյս՝ ոչ բերկրութեան եւեթ եղեն  
մեզ առ ի թք, այլ եւ ոչ սակաւ զարմա-  
նաց, եւ յառաջիկայսն՝ մեծաց յուսից  
ակնկալութեան:

Արգարեւ իսկ տեսաւ յայտնապէս  
ի հարցաքննութիւնս անդ՝ զի առաւե-  
լագոյն իմն եւ գոգցես անակնկալ գոր-  
ծեալ են դոքա յառաջադիմութիւնն ի  
վարժս Հայկաբանութեան, ոչ ի գիր  
միայն՝ այլ եւ ի բան եւ ի զրոյց ի գրոցն  
մեր բարբառ պատուական՝ ճոխ եւ  
պատկառելի: Քաջավարժք հանդիսա-  
ցան եւ ի թուաբանականին գիտու-  
թեան՝ քաջահմուտ վարժապետու-

թեամբ ուսուցչին իւրեանց, արիացեալ  
են եւ ի յաղթել սկզբնական դժուար-  
ութեանց՝ ուսման կարեւորագունին  
մեզ Ռուսացն լեզուի, եւս եւ Գաղղիա-  
կանին: — Պատմականքն եւ Աշխարհա-  
գրական հմտութիւնք՝ հանդերձ սկըզ-  
բամբք Բնական պատմութեան՝ յեր-  
րորդումն դասարանի գոգցես աւար-  
տեալք, իսկ յառաջնումն եւ յերկրոր-  
դին իբր ի կէս հասեալք՝ պատրաստեալ  
գօանին զսանս ձեմարանիս ի ճոխա-  
գունիցն ըստ այսոցիկ մասանց գիտու-  
թիւնս:

Թէ որքան ի վայելչագրութեան եւ ի  
Գծագրութեան եւ ի նկարչութեան ա-  
րուեստս իցեն զարգացեալք՝ տեսնել  
աւանիկ ի շարս անդ աշխատութեանց  
սոցին ի հանդիսարանի ձեմարանիս, եւ  
Ձայնագրութեանն նորոյ չքնաղ ա-

բուեատի հրահանգաց այնչափ տիրացեալ են երրորդի դասուն աշակերտք հանդերձ ոմամբք յերկրորդէն եւ յառաջնոյն, զի զութեսին զձայնս շարականաց եւ զդարձուածս նոյնն սերտ ի մտի ունելով՝ կարող են երգել անտայթաք զդժուարագոյնսն անգամ յեղանակաց, եւ նորանորս եւս ձայնագրել տաղս եւ երգս ըստ հաճոյից թելագրողացն, եւ երգել համարձակ:

Աստանօր արժան էր արդեօք ընդ անուանց միոյ միոյ յաշակերտացն եւ զուսմունսս նոցին ի մէջ բերել, եւ ասել՝ թէ ո՞վ որ յորում բաժնի գիտութեանցն եւ լեզուաց առաւելապէս քաջացաւ ի հարցաքննութեան ժամանակսն. այլ զի մի ծանրատաղտուկ լսելեաց գերյարգոյ ունկնդրացօ զբանս իմ առնիցեմ, շատ գրեմ առ տեղեաւս

զանուանցն եւեթ առնել յիշատակութիւն, առաջնակարգ եւ յոյժ գովել զայնոսիկ ընծայելով՝ որք հանդերձ անստգիւտ վարուքն եւ գնացիւք միանգամայն գրեա թէ յամենայն խակ ի մասունս ուսմանցն անվրէպ ճշգրտութեամբ վկայեցան քաջավարժք, եւ լիաբերան գովութեան եւ մրցանակաց արժանաւորք: Եւ երկրորդակարգ եւ գովել զթերացեալսն փոքր ի շատէ ի տարեկան ընթացս ուսմանցն եւ ի հարցաքննութիւնս: Ըստ այսմ Առաջնակարգ աշակերտք յոյժ գովելիք վկայեցան, եւ այսպիսիք ոմանք գտան յառաջնումն Դասարանի:

- Յովհաննէս Թամազեան ի Ստաւրոփոլէ.
- Նիկողայոս Քարամեան ի Շամսիւոյ.
- Սիմէոն Փիլիպոսեան յԱսպահանէ.
- Հայրապետ Պողոսեան ի Դավրիժէ.



Արրահամ Զամինեան ի Նոր Նախիջևանէ:

Տիգրան Ասլանեան յԵղոսկիոյ:

Ռափայէլ Գրիգորեան ի Դավրիժէ:

Գրիգորիս Փափագեան ի Վան քաղաքէ:

Բարձուղիմէոս Սուրիասեան յՈշտարակէ:

Համբարձում Սաֆարեան ի Կարբանդայ:

**Երկրորդակարգ աշակերտք գովելիք ի նմին Դասարանի.**

Յակոբ Պէքեարեան յԱնճապէ Կիլիկիոյ:

Վահան Մինասեան ի Վաղարշապատէ:

Տիգրան Սաֆարեան ի Նոր Արմաիրէ:

Ռուսթել Վարդանեան ի Վաղարշապատէ:

Գէորգ Ալվազեան յԱլիքէկու գեղջէ:

Ալեքսան Բաժանեան ի Վաղարշապատէ:

Խաչատուր Թաղէոսեան ի Մաստարա գեղջէ:

Արշակ Էտիլեան ի Բարվանսարայէ Ղազախու:

Գէորգ Մինասեան ի Պաճուռէ:

Մելրոն Սրմաքէշեան յՕրպազարէ Խրիմու:

Մկրտիչ Աբէլեան ի Վաղարշապատէ:

**Ընդ ամենայն աշակերտք քսան եւ մի որք եւ ի սկիզբն ուսումնական**

**տարւոյս փոխադրեցան յերկրորդն դասարան:**

**Յերկրորդում Դասարանին զառաջինսն կալան զտեղիս ի յառաջադիմութեան ասպարիսին Առաջնակարգք եւ յոյժ գովելիք:**

Սարգիս Տէր Գարրիէլեան ի Բուժայիսէ:

Թաղէոս Զաքարեան ի Շամախուոյ:

Կարապետ Տէր Մկրտչեան յԱղուլեաց:

Հմայեակ Խուշպուլեան ի Տրապիզոնէ:

Միսաք Ասիլեանց ի Վաղարշապատէ:

Միքայէլ Աստուածատրեան յԱզրիւմանէ:

Ենտլը Կէճնեան եւ

Պօղոս Տէր Պօղոսեան յԱղեքսանդրապոլսոյ:

Յովնանէս Անգլիցեան յԱժտերխանէ:

Համբարձ. Ստամպուլցեան յԱղեքսանդրապոլսոյ:

Աւետիս Զարկարեան յԱղուլեաց:

Յովնանէս Առարիլեանց ի Հին Նախիջևանէ:

Գալուստ Թումանեան ի Մոզուրքէ:

Պօղոս Սահակեան եւ

Հայրապետ Ստեփաննոսեան ի Տփլսեաց:

Գէորգ Տէր Բարձուղիմէոսեան ի Պրուսայէ.  
Յովհաննէս Տէր Դաւթեան յԱզրիբմանէ.

**Եւ երկրորդակարգ աշակերտք գովելիք.**

Սահակ Յարութիւնեան ի Կ. Պոլսոյ.  
Յարութիւն Ալվազեան յԱլիբէկու զեղջէ.  
Գրիգոր Թառուճեան ի Շուշուոյ.

Գալուստ Տէր Խաչատրեան ի Զալթր զեղջէ  
Նոր Նախիջեանսի.

Վարդան Տէր Մկրտչեան ի Վարդաշապատէ.  
Ստեփաննոս Տէր Անտոնեան յԵրեւանէ.

Վահան Շահինեան ի Կէչրու զեղջէ

Միքայէլ Տէր Գարրիէլեան ի Սալխերէթ ա-  
ւանէ, եւ

Թաղէոս Տէր Մանուէլեան ի Ելուր զեղջէ.

**Ընդ ամենայն աշակերտք քսան եւ վեց,  
եւ սոքա յերրորդն փոխեցան Դասարան:**

Իսկ որք յերրորդի դասուն յառա-  
ջագէմք հանդիսացան՝ եւ յոյժ գովե-  
լիք՝ սոքա են.

Գարրիէլ Առաքելեան ի Ղզլարէ; սորոյ  
Կոստանդին Մելիք Շահնազարեան եւ

Սիմէոն Հասուճեան ի Շուշուոյ.

Ստեփաննոս Մալխասեան

Գալուստ Տէր Մկրտչեան եւ  
Հմայեակ Սողոմոնեան յԱխալցիսայէ.

Մինաս Պանճուլագեան ի Ղզլարէ.

Նիկողայոս Տէր Աւետիքեան ի Շուշուոյ.

Գէորգ Խանըմեան եւ

Սերովբէ Սամարցեան ի Նոր Նախիջեանէ.

Մուշեղ Մախիկոնեան

Յարութիւն Պահլաւունի եւ

Սեդրաք Գրիգորեան յԱղերսանդրապօլսոյ.

Աղերսանդր Շաւարշեան յԻգտիրէ.

**Երկրորդակարգ աշակերտք գովելիք.**

Մկրտիչ Զարարեան եւ

Ստեփան Մկրտչեան յԿտիրէ.

Բաղդասար Մելիքեան ի Ղզլարէ, եւ

Յովակիմ Իւզբաշեան ի Շուշուոյ:

**Ընդ ամենայն աշակերտք երիցագոյնք  
ու թեւտասն, որք եւ փոխադրեցան ի նոր  
դասարան Զոյրոյր: Եւ այսպէս աման այլ  
եւս Դասարանք երկու, որ բացցին յամ-**



սրն 1877 եւ 1878, եւ ապա այնուհետեւ սկիզբն արացի ձեմարանականացն բաժնից, յորս դասախօսութիւնքն եղիցին՝ ոչ եւս սովորական կամ Գալոցական ոճով: այլ մանաւանդ իբրու ատենախօսութիւնք վարդապետականք զպէսպէս գիտելեաց, զուսումնականաց եւ զբանասիրականաց:

Իսկ յորոց մնացինն առ տխեղծ հասակացն չներելոյ՝ ի նորումս յառաջնում՝ դասարանի յոյժ գովելի աշակերտք՝ սոքա են.

Արշակ Գէորգեան ի Տաշղապ գեղջէ Աղերսանդրապօլսոյ.

Ստեփաննոս Թորոսեանց յԱսպահան:

Մանուկ Խաչատրեան յԱստապատէ.

Ներսէս Պօսնեան յԱնժապէ Կիլիկիոյ.

Եւ ի սոսա յաւելան զարդիս նորեկ աշակերտք քսան եւ չորք, առհասարակ

ընկալեալք յԱ. Դասարան, եւ երկուքն յերկրորդ եւ յերրորդ:

Արդ ի տես եւ ի լուր այսքանոյ յուսասպատար խնդութեան ընդ արգասիս օրհնութեան Վեհիդ եւ աղօթից սրբբոյ Ուխտիս միաբանութեան, որպէս եւ անդուլ ջանից վարժապետացն մերոց եւ աշակերտաց, ներեսցէ ինձ Ձերդ Վեհափառութիւն թուիչս արձակել առ վայր մի մտացս թեւօք, եւ վերապացեալ ի լուսափայլ գագաթն մեծի լերինդ Մասեաց, ի Հայկազնեանդ ասեմ Ողիմպոս, շուրջ յաճել զականողիս ի կայս եւ ի կոյս արեւելից եւ արեւմտից, հիւսիսոյ եւ հարաւոյ, եւ իբր ի պատկերի մեծի զԳէորգեանս ձեմարան մատնանիշ ցուցանելով որդւոց Հայաստանի որ ի սիլւուս իցեն՝ քարոզ կարգալ առ նոսա եւ ասել Մանկունք

46640

Հայաստանի որդիք սիրասունք Աեհա-  
 փառ Հայրապետիս մերոյ Գէորգայ Գ,  
 զարթիք ի ձերմէ մահահանգոյն թըմբ-  
 րութենէդ յուսահատութեան: յսր ըն-  
 կըզմեալ կայք յամաց բազմաց հետէ,  
 մոռացօնս գործեցէք վայրիկ մի աղե-  
 տիցն մեծաց զորս կրեցէքն եւ սպառե-  
 ցէք: սրբեցէք զարտասուս յաչաց ձե-  
 րոց, եւ տեսէք զակնկալութեանցն ձերոց  
 նշոյլս պայծառապէս փայլատակեալ առ  
 տեղերքն՝ յորս կոխեցին լուսաշաւիղ ոտք  
 Նահապետին Նոյի եւ Առասաւորչին աղ-  
 քիս Գրիգորի Պարթեւի եւ Ներսիսի մե-  
 ծի, եւ Սահակեանցն եւ Մեսրոպեանց,  
 եւ զմայլեալք բաժակաւ անտրտում ու-  
 րախութեան՝ եկայք խառնեցէք զձայնս  
 հրճուանաց ձերոց ընդ բարեբանու-  
 թեանց մերոց յորդորմունս եւ օրհնե-  
 ցէք զսկզբնապատճառն այսմ բարեաց:

Հապայ օրհնեցէք որդիք շնորհա-  
 պարտք: զբարեխնամս ձեր Հայրապետ  
 ի բարենշան յայսմ տարեկանի ի մե-  
 ծաշուք հանդիսի տօնականս առւրս  
 սրբոյն Գէորգայ քաջայաղթ զօրավա-  
 րի: Մաղթեցէք Անուանակցի նորին  
 կեանս երկարաձիգս, զի եւս քան զեւս  
 զուարճացի ի տեսիլ բարգաւաճելոյ  
 իւրումն ձեռակերտի ընդ մեծազօր  
 հովանաւորութեամբ օգոստափառ կայ-  
 սերն Ռուսաց, եւ աստտին վայելեսցէ  
 ընդ ամս բազումս ի յոգնաբեղուն ար-  
 գիւնս բարեաց օժտելոց յիւրմէն ի  
 փառս եւ ի պայծառութիւն Հայաս-  
 տանեայցս Եկեղեցւոյ եւ Ազգի:

Handwritten note in the left margin: *Handwritten note in the left margin.*

Handwritten notes at the bottom of the page, including a decorative separator line and several lines of text.



Հետեւեալ երկու ուղերձներէն մինը  
 Ի դիմաց աշակերտաց ձեմարանի՝ եւ  
 միւսը Ի դիմաց աշակերտուհեաց ծխ-  
 օրհորդաց Դպրոցին Վաղարշապատու  
 կարգացուեցան Վեհարանում:

**ԱՌ**

**ԱՄՏՈՐԱԾԱԳՄԱԿ ՎԵՏԱՓՈՒ**

**Տ՝ Տ՝ Գ Ի Ո Ր Գ Գ**

Ոգիդ անմահ, որ Ի բարձանց հայրենեաց  
 Աւետանոր դիմեալ Ի ձայն հըրճուանաց  
 Գաս տարփողել մեզ ցընծութիւն անըստաւ,  
 Ողջամբ գալուստ քո Ի տաճարս վեհափայր:

Չայգ գեղանի լուսաճածանչ դու պարզես,  
 Նոր աւաւտո՞ նոր օր կենաց ծաղէ մեզ-  
 Հայրապետիս մերոյ աւուրք գեղածին  
 Գեղափլըթիթ բողբոջեն փառքս կըրկին:

Դու զՎեհին մեր անուան չըքնող յիշատակ  
 Հանգոյն շողից զոր մեզ սըփուէ արեգակ  
 Չարթուցանես Ի սիրտ Ի քնարս սսկեւար,  
 Վեհիս հանդէպ կայտայ օրբուց Եւր կաճաւ:

Յորչափ ցընծան լերինք Հայոց ծաղկածին  
 Եւ շողշողեն աստեղք սոյծաւ Ի յերկին,  
 Որդւոց երամբ բոլորեցեն սերճ պըսակ  
 Ի բիւր ծաղկանց նըմին դունակըս գունակ:

Մաղթեմք, ս՛վ Հայր, Ի փառս ազգիս քո Հօտին  
 Երկարեցին աւուրք կենացըդ քոյին-  
 Չայս Ի սըրտէ յաւուր պաշտպան քո Սըրբոյ  
 Մեաբարբաւ հանեմք առ Տէր ձօն սիրոյ:

**ՉԵՐՈՒՄԳ ՎԵՀԱՓՈՒՈՒԹԵԱՆ**

Աճեանախոնարհ որդի եւ աշակերտ Չորրորդ դասարանի  
 Գեորգեան ձեմարանի  
 ՍԻՄԵՈՆ ՀԱՆՈՒՄԵԱՆՅՑ.

ՎԵՀԱՓՈՒՍՏԷՐ՝

Չայն ոգեշարժ հայրերդն յուսնի հնչի թողըրաշունչ,  
կենդանութեան տայ զաւետիս նոյր յերգ պարզել  
զիւրեանց շունչ,

Տօն մեծ այսօր արժանընտիր Հայրապետին Ռէորդայ,  
Օն փութացէք ի դրուստել որդիք քաջին թորդս-  
մայ:

Բնքէ, նոյն ձայն եղեմալուր աշխոյժ սիրէ գլխովին,  
Շարժէ զմեղ ջահալուցել զմեծափառ տօն Վեհիդ,  
Եւ փոյթ կանխել Ձեղ յանդիման այս նորահիւս  
ընծայիւ \*),

Երախտագէտ պարտեօր լցեալ տալ Ձեղ ուղերձ  
գոհ սրտիւ:

Ընկնալ Հնչր մեր, Հնչր Վեհափառ, ընկնալ սանուցդ  
զայս նուէր,

Ընկալ ի հաճոյս կամաց Ձերոց, զայս աղայեմք  
անձնամուէր,

Ընկնալ, բայց ոչ Ձեր երախտեաց եւ ոչ ճգանց փո-  
խարէն,

Ո՛չ, զի նորատունկ մատաղ ծառոց երախտարիք է  
արդէն:

(\*) Աս առթիւ օրիորդ մի բարձր եռլիբեցին Վեհ. Հայրապե-  
տին, զոր ինքեանք ձեռագործած էին:

Սա ոչ կարէ լինել սրիտուր քննադ դործոցդ Հայ-  
րական,

Եւ ոչ խնամոցդ՝ զոր Ռուք ունիք ի մանկուսն Արա-  
մեան,

Ա.ՅԷ երախտեաց եւ Ձեր ճգանց մեծ փոխարէն,  
Հնչր բարի.

Ռուք ստանալունիք անշուշտ մեր յԱրարչէն կրկնակի  
Մեր յԱրարչէն, սր դՁեղ ընտրեալ ի մարմանդին  
հայրենեաց,

Եղ լուսատու հզօր ձեռամբ գերդ արեգակ մեծա-  
պանծ,

Ոյր վասն եւ Ռուք սիրեալ զազգ մեր՝ փոյթ մեծ  
տանէք քրտնաջան,

Լոյս տարածէք, յոյս փրկութեան վերականգնէք ի  
զարդ հայութեան,

Ահն քոյրիկք իմ համատիք, ահն մեղ օր հրաշալի,  
Օն զմաղթանս առ Տէր ուղղել, ծն փութացէք սըր-  
տիւ լի.

Երկարեցի ոսկերնարօտ Հայրապետին թեւ կենաց,  
Չհայրական զսէր հեղուլ ի յանդաստանս Հայկա-  
զանց,

Ասաց աշխարհի օրերդ արեւն Ռուքն

Վ. Խ. Խ. Խ.



Հեռագայ ուղերձները ձեմարանական  
 Հանդիսին մէջ կարգացուածներն են,  
 եւ առաջինը՝ ձեմարանի Դեր. Վերա-  
 տեսչին ճառէն յետոյ՝ Հայկաբանու-  
 թեան եւ Հայ. Մատենադրութեան  
 Պատմութեան դասատուն ընթերցաւ:

## Ո Ւ Ղ Ե Ր Չ

Մուսայի Հայոց՝ աւետաւոր յաղթանակաց ի գու-  
 պար,  
 Ի սըրբավայրս օրհնեղութեանց ի դաբիրայս թեւա-  
 պար,  
 Հիմ ճշ ստորոզս յերգ յայս հանդէս յունկըն սլարու  
 Հայկեան տան,

Միթէ չիցեն, բարձան իսպառ աւուրք փառաց Թոր-  
 գոմեան,  
 Ոչ, այս զինուց յաղթանակաց չէ այս հանդէս դիւ-  
 ցազին,

Որ ի նախճիրըս ճապաղեաց քաղէ ի վարձ ըզդափնին,  
 Այլ հայրենեաց Հօրըն Վեհի եւ Աստուծոյ Օծեւլոյն  
 Ի Լուր ըզփառըս վաստակոց երգեւ զՆորին մեծ ա-  
 նուն

Այսպէս երբեմն անտղտ լոյս ծաղէր նորոգ մշտ ար-  
 փին,  
 Կենաց սըրբոյ Հօր Պարթեւի պըճնեւ զաւուրքս նո-  
 րին,

Այսպէս երբեմն երանի հընէր փանդիւն տանս Հայ-  
 ոց,  
 Խընդայր աշխարհ, բերկըր յուսով, հըրճուէր Պար-  
 թեւն ի դահոյս:

Գոչեա Մուսայի մեծաբարբաւ, ողջունասուն արդ-  
 կըրկին

Ըզվերադարձ արփուցն պայծառ Հօրս աւետեւ աշ-  
 խարհին.

Հարէք բամբուռնք եւ զարթեցէ ի Լուր ձայնից Հայ-  
 կեան տուն,  
 Եւ դիմեսցեն բերկրապատար յոտըս Վեհի Հօր յոդ-  
 ջրոյն.

Մաւալեցէք առ գարշապարս Նորին ըզխանդըս սըրտից,  
 Հեղէք սիրոյ դուր ըզնըւազս եւ զօրհնութեանց երգս  
 ամբիծ:

Յանուն քո՝ Հայր, քանի շըրթուրք ի յօրհնութիւնըս  
 պարզին.

Յանուն քո մեծ բիւրք բիւրուց սիրտք ի գութ սիրոյ  
 մորմըրին.

Յանունդ յաւէրժ պըստկազարդ եւ մեք ահա քո  
 որդիք

Կենդանութեան եւ իմաստից ըզսիւք դիեն հայրենիք:

Դու ի սոյն վայր ուր ըզհիմունս արկին Մեսրոպ  
 եւ Սահակ,  
 Յաւերակաց հաներ դտաճարս եւ կառուցեր փառու-  
 նակ,  
 Աջ Պարթեւին շնորհապարգեւ աստ ըզհիմունսն  
 դընէր,  
 Աջ Բո օրհնեալ, վեհ Հսրապետ, ըզդըրանդիսն  
 պընդէր,  
 Բեզ Օծելոյդ բեր երանի, որ դնոյն փառացն Սըրբոց  
 Աւեր արիտուր քոց վաստակոց մերթ երաշխէպըս  
 Ս. յս փոխարէն միշտ արդարոց եւ այս ի մէջ է բա-  
 ժին,  
 Պըսակ փըշեայ՝ ոչ վարդենույ՝ ի գըլէս փըրկին մեր  
 Ա. յւ Յոյս եւ Սէր, Հաւատ խարխիս յոր դու յեւուս  
 մնասան,  
 Սաւառնաթեւ հանդէպ քոյին հրեշտակ կարգեալ  
 պահապան,  
 եւ քաջսյաղթ Պաշտպան քո Սուրբ ասպարափակ ըզ-  
 փեւ յար  
 Ձերծ պահեսցեն ի վըտանդոց եւ յաւելցեն ամս  
 յամայր

ՄԿՐՏԻՁ ՊԱՆԵԱՆ.

### ՈՒՂԵՐԶ

Ձըւարթարար այսօր արփին ծաղէ մեզ լոյս գեղանի,  
 Օր հրճուանաց եւ խնդութեան ի տարեդարձ Հօրս  
 վեհի,  
 Որ անձանձիր յերկ վաստակոց սըփուէ ի մեղ դիւր  
 խընամ  
 Մարդեալ յուսումըն դիտութեանց զՀայոց մանկանցըս  
 երամ,  
 Ձոր ժողովեաց քաղցր ի հրաւէր ի հոյակապ իւր  
 տաճար,  
 Նոր նորոգեւ Հայկեան զարմիս գոսկերդինիկ դայն մեծ  
 դար՝  
 Յորում Սահակ ընդ Մեսրոպայ ի սէր ազգին աջակ-  
 ցեալ  
 Ձտըգիտութեան իարատեցին զվաղեմին մէզ մըւայլ,  
 Ձնոցին ի Բեզ, ո՛վ Հայրապետ, դիտեմք չքնսալ ըզ-  
 տիպար,  
 Որ ի նախանձ բարեաց դազդ քո ցանգ յորդորես  
 հայրաբար,  
 Ոչ, ոչ ի զուր են քո վաստակք Հնար Հայկազանց  
 բազմաշխատ,  
 Պըսակեացն սորդիւնք գործոց Դիտապետիդ ըզճալատ,



Ընկնւլ զորդւոց քոց սիրասուն մաղթանս սըրտից

անդադար,

Կսուս փոխարէն լուսոյն զոր մեզ ծաղեւս սիրով մըշտովսու,

ԶԱջ Անեղին Քեզ հովանի մաղթեն որդեք միաբան,  
Պահպանեսցէ ի փառս աղգի զչօվիււրդ քաջ անսասան:

Երկարեսցէ զկենացըդ թեւ սըսակ գլխոյդ անթաւամ:

Յաւերժացին քո յիշատակք ի սիրտ որդւոց յամայրամ:

Պայծառասցի ի լոյս փառաց քոց մայրս հանուրց Հայաստան:

Եւ բիւրաւոր դըսցէ որդւոցն ի տաճարիս ասպատան:

ԿՈՍՏԱՆԳԻՆ ՄԵԼԻՔ ԵԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ  
ի գիմաց աշակերտաց Զորորդի Դասարանի:

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆ (\*)

Լուսաւորեանց Կրուսաղէմ,  
Հայկեան գրոհիս Սիոն սուրբ,  
Ընկեան ի բաց ըզբօղ նըսեմ,  
Եւ արկ ըզբող՝ շըղարշ նուրբ:

Ամբարձ ըզքեւ շուրջ գաջս քո,  
Տես ըզմանկտիդ խուռնընթաց,  
Մանկտի ծընունդ քո սուրբ ծոցոյ  
Սըփռեալ ի ծագս աշխարհաց:

Քեզ ահն ունին կըղզիք թարստի,  
Հայք որ ի սփիւռս պանդըխտին,  
Յեւ արեւու ի հիւսիսի,  
Հարաւ ի մուսս արեգին:

Հնպս դողջիր, ճիլ են սըքս,  
Ա՞մա ընդ եթեր սըլացիկ,  
Թէ աղաւնեաց երամ՝ որ դայ  
Զադախաւունեալ աւանիկ:

Տես եւ խընդա եւ զարմացիր,  
Ազգաց ի քեզ կուտի դանձ:

(\*) Ի բան Եսայիայ (զլ. Կ. 4)

Իմաստութեան գանձ լիաձիր  
ձոն քան զականս պատուականս:

Փեռեկեսցին դրուճք տաճարիդ  
Չոր աջ վեհնա քո կանգնեաց,  
Լըցցին սըրահք քո եւ գաւիթ  
Ի բազմութիւն որդեկաց:

Լիբանանու փառք եւ պարծանք  
Սարդ եւ սօսի՛ նոճ եւ մայր,  
Եւրոպեայ մօր ասեմ՝ պերճանք  
Ի քոյդ զեղցին վեհավայր:

Փառաւորել զտեղի ոտից  
Հօր Միածնին շողակաթ,  
Եւ զձեմարանդ՝ լոյս իմաստից  
Հայոց շողել ի ճակատ:

Ոչ եւս մըտցէ քեզ արեգակն  
Եւ ոչ ի փուլ գայ լուսին,  
Չի Տէր լեցի քեզ լոյս համակ,  
Լոյս եւ Օճեալըս նորին:

ԹԱԴԻՈՍ ԶԱԲԱՐԱՆԱՆՑ

Ի զիմաց աշակերտաց երկրորդի Դասարանին.

Ն Ո Ւ Ա Գ

Ո՛վ հըսկայից յաւերժից դռւ մըրցանաց ասպարէս,  
Արարատեանըդ նահանգ եւ որ ըզքեւ սրարայած  
Լերինք բարձունք Աստուծոյ, տեսէք երբէք դուք  
Հանդէս

Մերոյս հանգոյն հանդիսի սքանչելահարաշ գերապանձ,  
Ըզձեզ երբեմն ընթադրեաց աշխարհակուլ ջուրց հե-  
ղեղ.

Ապա մըուայլ գիշերոյ տըղիտութեան թընսպայորդ,  
Ապա արեան ճապաղիք զոր անողորմ սուրն եհեղ,  
Մինչեւ կաթեաց յեթերաց շող լուսարփին անաղօտ:

Աւ նոյն շողիւ նոր Գրիգոր՝ մեծ Հայրապետը Գէորգ,  
Գու մեզ տաճար կանգնեցեր եօթնալսահան ուղիփածմ՝,  
Խոռուն ընթանան այսր ահա, որդիք Հայկայ բիւ-  
րաւորք:

Բոլորեցան ամք երկու, կըրկնեցան փառք քո վսեմ, —  
Մաղթեմք, սվ Հայր, դանուն քո դարք կըրկնեցեն  
յաւիտեան,

Եւ պանծասցի Այրարատ ի Գէորդեանս ձեմարանս:

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ՍՏԱՐԵԱՆՑ

Ի զիմաց աշակերտաց երկրորդի Դասարանին.



Die erste Sache ist die, dass die  
 Herrschaft der Kirche über die  
 weltliche Gewalt nicht nur  
 in der That, sondern auch  
 in der Theorie besteht. Die  
 Kirche hat das Recht, die  
 weltlichen Fürsten zu  
 ernennen und abzuweihen,  
 und die weltlichen Fürsten  
 sind verpflichtet, die  
 Kirche zu unterstützen und  
 zu beschützen. Dies ist die  
 Grundlage der Kirche'schen  
 Herrschaft.



